24210



ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պ. Պ. ՊՈՍՏԻՇԵՎ

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԵՊՈԽԱՅԻ ՆՈՐ ՄԱՐԴԻԿՆ ԵՆ

331.87
Պ-85

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ • ԵՐԵՎԱՆ

23.07.2013

331.87
Պ-85
Կ

Պրոլետարներնե՛ր բոլոր յերկրների, միացե՛ք

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆ
ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՑԵՎ ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ
ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՍՌԱՋԻՆ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Պ. Պ. ՊՈՍՏԻՇԵՎ

ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԵՊՈԽԱՅԻ ՆՈՐ ՄԱՐԴԻԿՆ ԵՆ

1366
41.34
~~5051~~
Гос. Публичная Б-ка
14625-57

ՀԱՅԿՈՒՍԱՐԱՆ • ԵՐԵՎԱՆ • 1936

Թարգմ. Մ. Զաքարյան, խմբ. Հ. Գասպարյան
սրբագրիչ Վ. Ջիղեջյան, տեխ. խմբ. Ս. Խաչատրյան

Գլավլիտի լիազոր C—92, հրատ. № 337
պատվեր № 407 տիրաժ 10,000, ինդեքս П—80

Հայկուսհրատի տպարան, Երևան, Աբովյան 27

П. П. ПОСТЫШЕВ

СТАХАНОВЦЫ НОВЫЕ ЛЮДИ
ЭПОХИ СОЦИАЛИЗМА

Армпартиздат, Эривань

ՀԱՂԹԱՆԱԿԱԾ ՅԵՐԿՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՇԱՐԺՈՒՄԸ

(ՃԱՌ ՍՏԱԽԱՆՈՎԱՍԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՒՌԱՋԻՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ 1935 Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 15-ԻՆ)

Ընկերներ, ամենից առաջ թույլ տվեք ինձ Ուկրաինայի կոմունիստական կուսակցության բոլշևիկների Կենտրոնական Կոմիտեի, ուկրաինական կառավարության և Ուկրաինայի բոլոր աշխատավորների անունից ձեզ, մեր յերկրի լավագույն մարդկանց, հաղորդել բոլշևիկյան բոցավառ վողջույն: (Ծափահարություն):

Ընկերներ, այն վիթխարի ներդրումները սոցիալիստական շինարարության մեջ, վոր կատարել են մեր սոցիալիստական մեծ հայրենիքի աշխատավորները նախընթաց բոլոր տարիների ընթացքում, ակսել են, ինչպես ասում են հատուցել տնտեսության բոլոր տեսակների ու ճյուղերի մեջ մեր մեքենաներով, բամբակով, հացով և այլն: Բայց ամենաթանկարժեքը, ամենակարևոր հատուցումը՝ սա նոր մարդկանցով, սոցիալիստական տիպի մարդկանցով հատուցելն է: Ստախանովականներ, կրիվոնոսականներ, բուսիգինյաններ, դեմչենկոներ, վինոգրադովականներ, — ահա հենց սրանք են այդ նոր մարդիկ, վորոնց ծնել ու աճեցրել է պրոլետարական Հոկտեմբերը: Սա, ընկերներ, պրոլետարական հեղափոխության ամենահզոր ուժն է, նոր մարդիկ,

բոլշևիկյան մարդիկ, սրանք, ընկերներ, ամբողջ հակահեղափոխության համար ամենաջախջախիչ ուժն են:

Ընկերներ, մեր բոլոր թշնամիները կորցրել են ամեն մի հույս խորհրդային իշխանության տապալման հնարավորության վերաբերյալ, նրանք այժմ դատում են այսպես. «բոլշևիկներն ստեղծել են հզոր կարմիր բանակ, բացի սրանից, ունեն իրենց հատուկ, լավ կազմակերպված վոստիկանությունը — ՊԲՎ: Ուստի ներկայումս ԽՍՀՄ-ում վերևից ապստամբության վերաբերյալ մտածել անգամ չարժե: Բոլշևիկները կճզմեն ապստամբությունը»:

Ինչպես տեսնում եք, այսպես է խորհրդային իշխանության թշնամիների պատկերացումը մեր սոցիալիստական հայրենիքի, նրա ուժի և ներքին դրության վերաբերյալ: Ե՛հ, ինչ արած, հենց սրա համար էլ նրանք թշնամիներ են: Բայց մենք ձեզ հետ միասին գիտենք, ընկերներ, վոր մեր յերկրի անխորտակելի ուժը—դա կալիտալիստներից ու կալվածատերերից ստմիշտ ազատագրված միլիոնավոր բանվորներն ու գյուղացիներն են, վորոնք այժմ աշխատում են իրենց համար, իրենց հայրենիքի համար: Խորհուրդների յերկրի ուժն այն է, ընկերներ, վոր նա ունի այնպիսի ոգեշնչելի վորդիներ ու աղջիկներ, վորպիսին դուք եք, այստեղ ներկա գտնվող ստախանովականները, կրիվոնոսականները, բուսիգինյանները, և ձեր հետևից յեկող, ձեզ հավասարվող միլիոնավոր մարդիկ: Կարո՞ղ եյին արդյոք մեր թշնամիները չնկատել ստախանովյան այս հզոր շարժումը, երբի մեր խորհրդային ամբողջ մեծ ժողովրդի շարժման ակիզբ, շարժում հանուն նոր ձևով աշխատելու, հանուն աշխատանքի բարձր արտադրողականության, հանուն աշխատանքի բարձր վորակի, հանուն այն բանի, վոր ինչքան կարելի յե շատ հասնել լարժեք սոցիալիստական կյանքի: Իհարկե, ստախանովյան շարժման թշնամիները տեսնում էլ են, ըղդում էլ են և լավ գիտեն, վոր իրենց դժբախտությունը

միայն մեր փառապանծ, հզոր Կարմիր բանակը չե, այլև մեր խորհրդային ժողովուրդը, այս միլիոնավոր յերիտասարդ մարդիկ, վորոնց ծնել է պրոլետարական Հոկտեմբերը: Իզուր չե, վոր թշնամիներն ամեն կերպ ջանում են արատավորել ստախանովյան շարժումը, և վոչ միայն արատավորել,— խորհրդային իշխանության թշնամիները հետապնդում են ստախանովականներին: Բայց նրանք չեն կարող կանգնեցնել այս հզոր շարժումը, վորովհետև սա հաղթանակած յերկրի ժողովրդի շարժում է:

Ընկերներ, թույլ տվեք ինձ միքանի խոսքով կանգ առնելու բուն ստախանովյան շարժման, նրա, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, պատմության վրա: Ստախանովյան շարժումը սոցիալիստական մրցության բարձրագույն աստիճանն է, նա իր մեջ ներծծել է նախընթաց ամբողջ շրջանի սոցիալիստական մրցության բոլոր ձևերն ու մեթոդները: Դուք լավ եք հիշում, վոր յերբ բանվորները մի քանդված գործարան կամ յերկաթուղամաս շուտ նորոգելու կամ մի ավելորդ վագոն ածուխ կամ փայտ ձեռք բերելու համար կազմակերպում եյին չարաթորյակներ: Սա շատ առաջ եր: Վերցրեք առաջին հնգամյակի շրջանը, յերբ կառուցողների հարվածային բրիգադները հրաշքներ եյին ցույց տալիս, տալիս եյին մեր սոցիալիստական կառուցումներում աղյուս, բետոն շարելու համաշխարհային ռեկորդներ: Ցեվ վերջապես, իզոտովյան շարժումը: Իզոտովյան շարժումը նախորդեց ստախանովյան շարժմանը: Այն տարբերվում եր նրանով, վոր միայն ինքը իզոտովականն եր գերակատարում նորմաները, այլև նա իր փորձը փոխանցում եր մյուսներին, իր հետևից տանում եր առաջավոր ընկերներին: Ստախանովյան շարժումը, նախ, անհնարինքաց է իր մասսայականությամբ, յերկրորդ՝ զարգանում է տեխնիկային խորապես ու համակողմանի տիրապետելու հիման վրա:

Եթե, ընկերներ, դուք վերհիշեք սոցիալիստական շինարարության բոլոր կարևորագույն շրջանները, ապա այս շրջաններում սոցիալիստական մրցության գործը մշտապես զարգանում եր այն լոզունգներով, վոր տալիս եր ընկեր Ստալինը: Ստախանովյան շարժումը նույնպես ծավալվեց պայքարի այն լոզունգով, վոր տվել եր ընկեր Ստալինը, տեխնիկային տիրապետելու համար, և սա առանձնապես կարևոր է, ընկերներ, վորովհետև այժմ թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության մեջ բանը վճռում է տեխնիկան: Ընկեր Ստալինն ասաց, վոր տեխնիկան, առանց տեխնիկային տիրապետած մարդկանց մեռած է: Դուք ձեր աշխատանքով ու ձեր արդյունքներով հաստատում եք առաջնորդի այս ցուցումը: Բայց ձեր մասին դեռ չի կարելի ասել, թե դուք արդեն լավ եք տիրապետել տեխնիկային: Ձեզ դեռևս հարկավոր է աշխատել ու աշխատել իր վրա, վորպեսզի ինչպես հարկն է տիրապետեք տեխնիկային, և սրանում ձեզ պետք է լավ ոգնեն ձեր գործարանների ու ֆաբրիկների ինժեներները, տեխնիկները:

Ցես, ընկերներ, դիրեկտորներին, ինժեներներին ու տեխնիկներին իբրև կշտամբանք չե, վոր ուզում եմ ասել, վոր աշխատանքը նոր ձևով կազմակերպելու պրոբլեմը, աշխատանքի արտադրողականության բարձրացման պրոբլեմը սկսեցին լուծել վոչ այնքան ինժեներներն ու տեխնիկները, վորքան իրենք բանվորները, Ստախանովները, Բուսիգինները, Կրիվոնոսները, Դեմչենկոները և ուրիշները (ծափահարություն): Կրկնում եմ, յես վոչ մի չափով չեմ ուզում սրանում կշտամբել ինժեներներին ու տեխնիկներին: Ցես միայն ուզում եմ ասել, վոր տեխնիկներն ու ինժեներները դեռևս անբավարար են աշխատում աշխատանքը նոր ձևով կազմակերպելու վրա: Ցեթե մինչև այժմ ինժեներները, տեխնիկները և գործարանների դիրեկտորները բոլորը

մինչև վերջին մարդը դեռևս բոլոր համապատասխան յեղրակացությունները չեն արել իրենց համար ստախանովյան շարժումից, ապա, իհարկե, ստախանովյան շարժման գործը դանդաղ կառաջանա: Հետևաբար, բանն այժմ մնում է գործարանների դիրեկտորներին, ինժեներներին, տեխնիկներին: Նրանք այժմ պետք է աշխատանք ծավալեն ստախանովյան շարժման շուրջը, ամրապես մտնեն նրա մեջ և սրանով ոգնեն այս լավագույն մարդկանց առաջ դնալու մեծ հաջողություններով:

Ցես կարծում եմ, վոր կուսակցական կազմակերպությունները, խորհրդային որգանների ղեկավարները պետք է ապահովեն մի ուրիշ, վոչ պակաս լուրջ հոգս, վորպեսզի ստախանովականների այս մեծ շարժումը չարգելակվի, այլ առաջ դնա: Սա—այս առաջավոր մարդկանց հետագա կուլտուրական աճման հոգն է, մարդիկ, վորոնք առաջ են տանում և կազմակերպում են բանվորների ու գյուղացիների միլիոնավոր մասսաներին սոցիալիստական շինարարության ճակատում: Ահավասիկ, ընկերներ, այն բոլորը, ինչ յես կուզեի ասել ձեզ, մեր մեծ սոցիալիստական հայրենիքի լավագույն մարդկանց: Ցեկեք մեր կուսակցության, մեր առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինի ղեկավարությամբ առաջ տանենք հաղթական դրոշը դեպի ավելի մեծ հաջողություններ, դեպի ավելի մեծ նվաճումներ (ծափահարություն): Բոլոր պատգամավորները վոտքի յեն կանգնում և վողջունում են ընկ. Պոստիշևին:

ԱՍՏԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

(ՅԱՌԿԻԵՎԻ ՍՏԱԽԱՆՈՎԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՎԱՔԻՆ, 1935 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՆ)

Ընկերներ, տասը որ հետո ԽՍՀՄ աշխատավորները, համայն աշխարհի պրոլետարիատն ու աշխատավորական բոլոր մասսաները կատնեն Հոկտեմբերյան մեծ հեղափոխության XVIII տարեդարձը:

Մտաբերում եմ, թե ինչ էր գրել Վլադիմիր Իլյիչը տասնչորս տարի սրանից առաջ, պրոլետարական պետության գոյության չորրորդ տարեդարձին:

«Մոտենում է, —գրում էր այն ժամանակ Լենինը,—Հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) քառամյա տարեդարձը: Վորքան ավելի յե հեռանում մեզնից այս մեծ որը, այնքան ավելի յե պարզվում Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության նշանակությունը, այնքան մենք խորն ենք թափանցում մտքով նաև մեր աշխատանքի պրակտիկ փորձի մեջ՝ ամբողջությամբ վերցրած»[1].

Վոչ թե չորս, այլ տասնութ տարի յե անցնում մեզ այժմ այն մեծ որվանից, յերբ Ռուսաստանի բանվոր դասակարգն իշխանությունը խլեց բուրժուազիայի և կալվածատերերի ձեռքից և ստեղծեց աշխատավորների պետությունը:

Անցած տասնութ տարիների այս բարձունքից աշխարհի աշխատավորական ամենալայն մասսաների ու բոլոր առաջավոր տարրերի տեսողության առաջ իր ամբողջությամբ բացվում է 1917 թվի հոկտեմբերի 25-ի հեղաշրջման նշանակությունն ամբողջ մարդկության բախտի համար:

Այժմ պարզ է դարձել բոլորի համար, վոր հենց ԽՍՀՄ-ում և միայն ԽՍՀՄ-ումն է, վոր աշխատավոր մարդը վիկատար չափով ազատագրվել է դասակարգային ստրկությունից և ապրում է լիարժեք մարդկային կյանքով:

Այժմ պարզ է դարձել բոլորի համար, վոր հենց ԽՍՀՄ-ում և միայն ԽՍՀՄ-ումն է տեղի ունենում արտադրողական ուժերի անընդհատ հզոր ծաղկում, վորը հարստություն ու առատություն է բերում հասարակության բոլոր անդամներին, բերում է մարդու վիկատար հաղթանակը բնության նկատմամբ:

Այժմ պարզ է դարձել բոլորի համար, վոր հենց ԽՍՀՄ և միայն ԽՍՀՄ-ն է հանդիսանում մարդկության կուտակած համաշխարհային կուլտուրայի իսկական պահպանողն ու կրողը, նրա պրոգրեսի շարժիչը:

Նախընթաց տասնութ տարիների ամենակարևոր, ամենաթանկարժեք դումարը միլիոնավոր նոր մարդիկ են, վորոնց աճեցրել ու դաստիարակել է մեծ Հոկտեմբերը, սոցիալիզմի հաղթության համար մղված հերոսական պայքարը: Մեր խորհրդային ժողովրդի ամենախորունկ շերտերից խլեցին ժողովրդական տաղանդների հզոր աղբյուրներ, միլիոնավոր սոցիալիստական աշխատավորներ բարձրացան ստեղծագործ կյանքի, դարձան անդատակարդ սոցիալիստական հասարակության գիտակից կառուցողներ:

Այս լույսի տակ, ընկերներ, հասկանալի յե դառնում ստախանովյան շարժման եյությունն ու բացառիկ նշանակությունը, շարժում, վորի մի ջոկատը ներկայացնում եք դուք, այստեղ ներկա գտնվողներդ:

Այժմ արդեն միանգամայն ակներև է, վոր ստախանովականները, բուսիդինականների, կրիվոնոսականների, վինո-

---

[1] Լենին XXVII հ., հայ. եջ 31.

դրաղովականների, ամեռանինովականների, դեմչենկոյականների շարժումը մի խումբ ռեկորդիստների շարժում չէ, այլ մեր ամբողջ խորհրդային ժողովրդի հզոր շարժման ակիզբը աշխատանքի իսկական սոցիալիստական արտադրողականության համար, մեր սոցիալիստական սիստեմի մեջ ներդրված բոլոր հնարավորությունների լրիվ ոգտագործման համար:

Այժմ արդեն միանգամայն ակներև է, որ ստախանովականների, բուսիդինականների, կրիվոնոսականների ռեկորդները հետևանք են վոչ թե պատահական կտրումի կամ ժամանակավոր դերլարման, այլ տեխնիկայի խոր տիրապետման և մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության լավագույն մարդկանց աշխատանքի նոր յեղանակների, աշխատանքի ու արտադրության կազմակերպման նոր մեթոդների ստեղծագործական վորոնումների:

Այժմ արդեն միանգամայն ակներև է, որ ստախանովականները վոչ միայն և վոչ թե պարզապես այնպիսի մարդիկ են, վորոնք տիրապետել են տեխնիկային և տալիս են աշխատանքի բարձր արտադրողականություն, այլ նոր մարդիկ, սոցիալիզմի դարաշրջանի առաջավոր մարդիկ, վորոնք իրենց գործով և որինակով ցույց են տալիս մեր խորհրդային ժողովրդի ամենալայն մասսաներին, թե ինչպես պետք է տիրապետել տեխնիկային, ինչպես պետք է աշխատել, ինչպես պետք է պայքարել սոցիալիզմի լիակատար հաղթության համար:

Պարզ է, ընկերներ, որ այսպիսի շարժումը կարող եր ծնվել միայն սոցիալիստական յերկրում, վորտեղ առաջին անգամ մարդկության պատմության մեջ ամբողջ ժողովուրդն ազատագրված է անազատ աշխատանքից, վորտեղ ամեն մի քաղաքացի իրականում կենսագործել է իր իրավունքն աշխատանքի նկատմամբ, վորտեղ աշխատավորն ազատված է նյութական կարիքի ճնշումից և վաղվա որվա

նկատմամբ ունեցած անվստահությունից, վորտեղ ամեն մի աշխատավորի համար ապահովված է դիտելիքների ու կրթության մատչելիությունը, վորտեղ աշխատանքը դարձել է «պատվի, քաջության ու հերոսության գործ», վորտեղ աշխատավոր մարդը բոլոր պայմաններն ստացել է իր ստեղծագործական հնարավորություններն ու ընդունակությունները լրիվ իհայտ բերելու և կիրառելու համար:

Ստախանովյան շարժումը մի ինչ-վոր անսպասելի բան չէ: Այս շարժումը նախապատրաստված է սոցիալիստական մրցության ամբողջ նախընթաց զարգացումով և հանդիսանում է նրա ամենաբարձր աստիճանը:

Իրոք, մտաբերեցեք, թե ինչ հիմնական ետապներ անցան իրենց զարգացման մեջ սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը:

Մտաբերեցեք ռազմական կոմունիզմի չրջանի կոմունիստական շաբաթորյակները՝ սոցիալիստական մրցության այս ամենավաղ աստիճանը: Հազարավոր հյուծված, կիսաքաղց առաջավոր բանվորներն իրենց ժամանակը մինչև վերջին ժամը տալիս եյին նրա համար, վորպեսզի քայքայված տնտեսությունից դուրս պոկեն վառելանյութի մի ավելորդ գնացք, վորպեսզի նորոգեն դարձյալ մի չոգեկառք, վորպեսզի ռազմաճակատն ամրացնեն մի քանի վագոն մետաղով ել, վորպեսզի պրոլետարական հեղափոխության նվաճումները, պաշտպանեն Կոլչակից, Դենիկինից, կալվածատերերի ու կապիտալիստների մյուս վարձկաններից: Դարեր կանցնեն, բայց մեր յերկրի ու ամբողջ աշխարհի աշխատավորները յերբեք չեն մոռանա հեղափոխական թիկունքի հերոսների աշխատանքային խանդավառության այս նմուշները:

Մտաբերեցեք, ընկերներ, առաջին հնգամյակի չրջանի սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունը, յերբ ամբողջ հասակով խնդիր ծառացավ ստեղծելու տեխնիկան

ըստ էության նոր ինդուստրիա և այն էլ նվազագույն ժամկետներում, ծառացավ գյուղատնտեսության տեխնիկական գինման և սոցիալիստական վերափոխության խնդիրը։ Մտաբերեցեք փառավոր, անմոռանալի գրոհային որերն ու գիշերները մեր մագնիտոստրոյներում, կուզնեցկոստրոյներում, դնեպրոստրոյներում, յերբ սոցիալիստական աշխատանքի ենտուզիաստները տալիս էին իրենց ուժի մինչև վերջին կաթիր, վորպեսզի չուտ, վորքան կարելի յե չուտ տեսնեն իրենց յերկիրը հզոր, պաշտպանունակ, կապիտալիստական աշխարհից անկախ։ Սա մեր յերկրի լավագույն, ամենաառաջավոր մարդկանց սոցիալիստական մեծագույն ավյունն էր՝ վոչ միայն ամրացված իր գործի տեխնիկայի իմացությամբ, բայց վորը սրբում էր բոլոր ու ամեն տեսակ խոչընդոտներն ու արգելքները բոլշևիկյան տեմպի համար, իր ինդուստրիայի համար, սոցիալիստական գյուղատնտեսության համար պայքարելու ճանապարհից։

Մտաբերեցեք Իզոտովյան շարժումը, սոցիալիստական մրցության ու հարվածայնության ավելի բարձր աստիճանը, վորն իր դրոշի վրա գրել էր ընկեր Ստալինի նշանավոր խոսքերը, այն է՝ «սոցիալիստական մրցության սկզբունքն է՝ առաջավորների կողմից ընկերական ոգնություն հետ մնացողներին, վորպեսզի հասնեն ընդհանուր վերելքի»։ Վոչ միայն ինքդ լավ աշխատիր, այլև սովորեցրու ուրիշներին և հասցրու քո մակարդակին,—այս էր Իզոտովյան շարժման լոզունգը։ Ուղորդունիստներն ու բյուրոկրատները փորձում էին Իզոտովյան շարժումը կերպարանել իբրև բոլշևիկյան հերթական մոդա, իբրև «սեզոնի» հերթական նորություն։ Այս է արդեն վիճակված այս մարդկանց՝ ֆչչալ ու ատել այն ամենը, ինչ նոր է՝ ծնված մեր մեծ սոցիալիստական դարաշրջանից։ Իզոտովյան շարժումն իրականում դարձավ մասսայական հզոր շարժում, ցույց տալով աշխատանքի սոցիալիստական արտադրողականության, սոցիալիստական փոխոգնության նմուշներ։

Մտաբերեցեք սոցիալիստական մրցության ու հարվածայնության հետագա զարգացումը, յերբ սաղմնավորվեց այսպես կոչված գերազանցիկների շարժումը, այսինքն՝ հարվածայինների վոչ միայն ըստ քանակական ցուցանիշների, այլև ըստ արտադրանքի վորակի, հարվածայինների, վորոնք աշխատանքի բարձր արտադրողականությունը համակցում էին աշխատանքի բարձր վորակի հետ։ Այս շարժումը նշանավոր է նրանով, վոր այն աշխատանքի բարձր արտադրողականության և արտադրանքի բարձր վորակի համար մղած պայքարով արձագանքեց յերկրորդ հնգամյակում մեր յերկրի առջև կանգնած նոր խնդրին, մի խնդիր, վոր ընկեր Ստալինը ձևակերպեց հետևյալ լոզունգով. «նոր շինարարության պաթոսը լրացնել նոր գործարանների ու նոր տեխնիկայի յուրացման պաթոսով»։

Սրանք են, ընկերներ, ամենաընդհանուր գծերով սոցիալիստական մրցության ու հարվածայնության զարգացման այն ընդհանուր ետապները, վոր նախորդել են Ստախանովյան շարժմանը։ Դուք տեսնում եք, թե ինչպես աստիճան առ աստիճան բարձրացել է, բայնությամբ ու խորությամբ աճել է մասսաների սոցիալիստական մրցությունը, իրենով արտացոլելով սոցիալիզմի աճումը մեր յերկրում, նոր վերաբերմունքի դաստիարակումը դեպի սոցիալիստական աշխատանքն ու սոցիալիստական սեփականությունը, տեխնիկայի յուրացումը ԽՍՀՄ աշխատավորների ավելի ու ավելի լայն մասսաների կողմից։

Ստախանովյան շարժումը, վոր մի ինչ-վոր յերկու-յերեք ամսում ընդգրկեց մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության բառացի բոլոր ճյուղերը,—սա սոցիալիզմի դարաշրջանի սոցմրցության ու հարվածայնության բարձրագույն ձևն է, վորն իր մեջ ներծծել է սոցիալիստական

մրցության նախընթաց ձևերի բոլոր հատկանիշները և դրանք հարստացրել՝ կատարելությամբ տիրապետելով իր արտադրության տեխնիկային:

Ստախանովյան շարժումը—սա մեր արդյունաբերության ու գյուղատնտեսության առաջավոր մարդկանց բոլշևիկյան պայքարն է՝ աշխատանքի բարձր, իսկական սոցիալիստական արտադրողականության համար, արտադրանքի բարձր վարձի համար, իր առաջավոր արտադրական փորձը բանվորների ու կոլտնտեսականների լայն մասսաներին հանձնելու համար, իր տեխնիկական դիտելիքները խորացնելու վրա սիստեմատիկաբար աշխատելու համար, աշխատանքի նոր, ավելի ու ավելի կատարելագործված յեղանակներ, աշխատանքի ու արտադրության կազմակերպման նոր մեթոդներ անընդհատ փորձելու համար:

Դուք տեսնում եք, որ Ստախանովները, Կրիվոնոսները, Վինոգրադովները, Բուսիգինները, Դեմչենկոները—սրանք մեր եպոխայի իրոք ամենաառաջավոր մարդիկն են, որովհետև այս մարդիկ իրենց մեջ զուգորդում են սոցիալիստական գիտակցության բարձր մակարդակը, սոցիալիզմի գործին անձնուրաց նվիրվածությունը արտադրության տեխնիկայի խոր իմացության, իրենց աշխատանքին ստեղծագործորեն մոտենալու հետ:

Ցես, ընկերներ, անհրաժեշտ եմ համարում առանձնապես ընդգծել ստախանովականների աշխատանքի այս ստեղծագործական մոմենտը: Չե՞ որ թե՛ Ստախանովը, թե՛ Կրիվոնոսը, թե՛ Բուսիգինը, թե՛ արդյունաբերության մյուս ճյուղերի ստախանովականները սովորական նորմաները 3—4 անգամ գերակատարել են հենց շնորհիվ այն բանի, որ նրանք իրենց ձևով, նոր ձևով են մոտեցել իրենց աշխատանքի յեղանակներին, իրենց համար ծառայեցրել են խրոնոմետրաժը, իրենք են մի շարք կատարելագործումներ դտել իրենց աշխատավայրի և իրենց աշխատանքի ռացիոնալացման համար: Կամ վերցրեք ճակնդեղային դաշտերի հինգհարյուրականներին Մարիա Դեմչենկոյի գլխավորությամբ: Չե՞ որ այս մարդիկ իրենց ձևով են մոտեցել ճակնդեղացանությանը, կիրառում են բույսին խնամելու իրենց հատուկ յեղանակները, ագրոտեխնիկական նոր յեղանակներ են փորձում ճակնդեղի պլանտացիաների համար: Թե՛ արդյունաբերության ստախանովականների, թե՛ կոլտնտեսությունների հինգհարյուրականուհիների համար բնորոշ է ստեղծագործական մասնակցությունն արտադրական պրոցեսին:

Հենց հատկապես այն հանգամանքը, որ ստախանովականներն ստեղծագործող տիպի մարդիկ են, մեզ վստահություն է ներշնչում, որ այս շարժումը կամի փոչ միայն լայնությամբ, այլև խորությամբ, ջարդելով ու շուռ տալով հաստատված, իսկ ըստ էության հնացած, ճահճացած պատկերացումներն արտադրանքի տահմանների, բերքատվության տահմանների վերաբերյալ և այլն, ցույց տալով աշխատանքի սոցիալիստական արտադրողականության նորանոր նմուշներ, ցուցադրելով ամբողջ աշխարհի առջև, թե ինչի յե ընդունակ նորագույն տեխնիկայով զինված աշխատավորը, որն աշխատում է փոչ թե կապիտալիստի, այլ իր համար, իր ժողովրդի համար, իր սոցիալիստական հայրենիքի համար:

Սրանք են ընկերներ, յեթե կարելի յե այսպես արտահայտվել ստախանովյան շարժման պատմական արմատներն ու նրա եությունը:

Թույլ տվեք անցնել Կիևվի ու Կիևվի մարզի ստախանովյան շարժման ծավալումը բնութագրելուն և այն խնդիրներին, որ դրված է մեր առջև այս ասպարեզում:

Կիևվի ձեռնարկություններում ստախանովյան շարժումը ծավալված է բավական լայնորեն: Զանազան ձեռնարկություններում մենք ունենք տասնյակ և հարյուրավոր ստա-

խանովականներ, վորոնց համար արտադրանքի նորման 2—3 անգամ գերակատարելն արդեն դարձել է աշխատանքի սիստեմ։ Կարելի յեր անվանել «Բոլշևիկ» գործարանի ստախանովականներ ընկ. ընկ. Սեմինին ու Գոպովին, վորոնք պարբերաբար իրենց նորման կատարում են 450%-ով, «Լենինսկայա Կուզնիցա» գործարանի Էլեկտրազոդիչ ընկ. Ցուզիկին, վոր իր նորման գերակատարում է 400—450%-ով, 4-րդ կոշկի գործարանի ձգող ընկ. Գոմուլկոյին, վորը մի հերթի միջոցին 720 զույգ կոշկի փոխարեն տալիս է 2170 զույգ կոշիկ։ Այնուհետև կարելի յե անվանել տրակտորիստ Կովալ Իվանին, վորն առ 10 հոկտեմբերի տվել է մի տրակտորին 440 հեկտար (մի հերթափոխում), յերբ սեզոնային նորման 300 հեկտար է և, բացի սրանից, տնտեսել է 1170 կգ. վառելանյութ, կամ վուշ զզող ընկ. Դուբոկ Տատյանային, վորն որական տալիս է 32 կգ. վուշ, յերբ նորման 9 կգ. է և այլն։

Ցես այստեղ ձեզ անվանեցի Կիևի ու Կիևի մարզի ստախանովականներից միքանիսին միայն։ Մեր ձեռնարկություններում, մեր ՄՏԿ-ներում, խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում այսպիսի հարյուրավոր մարդիկ կան արդեն։

Ի՞նչ ճանապարհով են այս մարդիկ հասնում արտադրողականության իրենց ռեկորդներին։

Հասկանալի յե, վոր սրանցից յուրաքանչյուրն ունի աշխատանքի իր յեղանակները, իր մեթոդները։ Իսկ յեթե անտեսենք յուրաքանչյուր առանձին ստախանովականի աշխատանքի յեղանակների ու մեթոդների առանձնահատկությունները, ապա կարելի յե գտնել միքանի ընդհանուր հատկանիշներ, վորոնք բնորոշ են բոլոր ստախանովականների աշխատանքի համար։

Ամենից առաջ՝ աշխատորվա առավելագույն խտացումը։

Աշխատորը մեզ մոտ ամենակարճն է աշխարհում՝ յոթժամյա, իսկ վնասակար արտադրություններում՝ վեցժամյա։ Բայց հո բավականաչափ հայտնի յե, վոր շատ հաճախ մեր ձեռնարկություններում այս յոթ ժամից արտադրողական աշխատանքով լցված է 5—5 և կես ժամը։ Մեր ձեռնարկությունները շատ ռեզերվներ ունեն աշխատորվա մեջ։ Ահավասիկ բոլոր ստախանովականների աշխատանքի առաջին սկզբունքը, անկախ այն ձեռնարկությունից կամ ճյուղից, վորտեղ նրանք աշխատում են,—սա աշխատորվա առավելագույն խտացումն է, արտադրողական աշխատանքի բոլոր յոթ ժամերի լրացումը։

Ցերկրորդ ընդհանուր հատկանիշը, վոր անհրաժեշտ է նշել մեր բոլոր ստախանովականների աշխատանքում,— սա իր աշխատավայրի և աշխատանքի յեղանակների ռացիոնալացման վրա սիստեմատիկ աշխատելն է։ Վերցրեք, որինակ, վերև իմ հիշատակած 4-րդ կոշկի գործարանի ստախանովական ձգող ընկ. Գոմուլկոյին։ Ինչպե՞ս է հասել նա իր ռեկորդին։ Սկզբում նա ուժ տվեց դաղդյահի աշխատանքի արագացման։ Սրանով նա վորոշ չափով բարձրացրեց արտադրանքը։ Իսկ հետո նա կատարեց մի շարք ռացիոնալացման միջոցառումներ, մասնավորապես այնպիսի ռացիոնալացման միջոցառում, ինչպես իր դաղդյահը կես մետր կոնվեյերին մոտեցնելը։ Մինչ այդ վուշ վոք զլխի չեր ընկնում այս անելու, բայց ահա նա արել է, և սա բավական եր, վորպեսզի նշանակելի չափով բարձրանա ընկ. Գոմուլկոյի արտադրանքը, վորովհետև իր դաղդյահը կես մետր մոտեցնելով կոնվեյերին, հենց սրանով նա մեծ խնայողություն է անում շարժումների մեջ։ Սիստեմատիկ աշխատանք իր աշխատավայրի ու իր աշխատանքի յեղանակների ռացիոնալացման վրա—ահա, թե ինչն է ընդհանուր մեր բոլոր ստախանովականների համար ռեկորդային արտադրանքի համար պայքարելիս։

1366
14621-57

Ցեվ յերրորդ հատկանիշը, վորի վրա յես անհրաժեշտ եմ համարում ձեր ուշադրությունը հրավիրել,—սա աշխատավայրի խնամքով նախապատրաստումն և սպասարկումն է: Ցեթե վերլուծենք, թե ամենից շատ ինչից է աշխատաժամը կորչում մեր ձեռնարկություններում, ապա կստացվի, վոր սա գլխավորապես ժամանակի կորուստն է նյութի, գործիքի հետևից գնալու վրա, այն բանի վրա, յերբ բանվորը սպասում է, մինչև վոր նրանից ընդունեն մշակված արտադրանքը և այլն, այսինքն՝ կորուստներ աշխատավայրի վատ սպասարկումից ու նախապատրաստումից: Մեր ստախանովականների ծառայությունը և նրանց աշխատանքի բարձր արտադրողականության լուրջ աղբյուրներից մեկն այն է, վոր նրանք հասել են իրենց աշխատավայրի ավելի կատարելագործված սպասարկման:

Դուք տեսնում եք, վոր ստախանովականների ռեկորդների հիմքում վոչ մի հրաշք չկա, վոր այս ռեկորդների հիմքն է կազմում վոչ թե վորևե գերլարում, այլ պայքարն աշխատորվա առավելագույն խնայման համար, իր աշխատանքի ռացիոնալացման համար, աշխատավայրի արտադրական-տեխնիկական լավ սպասարկման համար: Դուք տեսնում եք, վոր ստախանովականների ռեկորդների հիմքն է կազմում այն, ինչ յուրաքանչյուր բանվորի ուժերի համեմատ է և նրան մատչելի, յերբ այդ բանվորը հաջողությամբ տիրապետում է իր արտադրության տեխնիկային: Դուք տեսնում եք, թե աշխատանքի արտադրողականության հետագա բարձրացման ինչպիսի հսկայական ռեզերվներ ունենք մենք, յեթե ստախանովականներն այս ուղղությամբ կատարած առաջին իսկ քայլերից արդեն հասել են արտադրանքի նորմաները 3—4 և ավելի անգամ գերակատարելուն:

Ցեթե Կիևի մեր բազմաթիվ ձեռնարկություններում ստախանովյան շարժումն արդեն բավական լայն չափեր է ընդունել, ապա սա բնավ չի կարելի ասել մեր բոլոր ձեռնարկությունների վերաբերյալ: Դեռևս մեզ մոտ, Կիևում, և առանձնապես Կիևի մարզի ուրիշ քաղաքներում ու շրջաններում քիչ ձեռնարկություններ չկան, վորտեղ մեր ժամանակաշրջանի այս մեծագույն շարժումը վոչ մի, կամ համարյա վոչ մի արձագանք չի գտել: Վերցրեք, որինակ, Գորկու անվան կարի գործարանը, կամ № 43 գործարանը, կամ Ֆաստովի «Կրասնի Ոկտյաբր» գործարանը: Ձե՞ վոր այս ձեռնարկություններում կուսակցական, տնտեսական և արհմիութենական ղեկավարությունը բառացի վոչինչ չի արել ստախանովյան շարժումը ծավալելու համար:

1929 թ. ընկեր Ստալինը, մերկացնելով բյուրոկրատական վերաբերմունքը դեպի սոցմրցությունը, գրում էր.

> «Միքանի բյուրոկրատ «ընկերներ» կարծում են, թե մրցությունը բոլշևիկների հերթական մոդան է և, իբրև այդպիսին, «սեզոնը» վերջանալուց հետո պետք է լռի[1]»:

Ցես չեմի ուզի կարծել, թե իմ վերև հիշատակած ձեռնարկությունների ղեկավարությունը ստախանովյան շարժման վրա այսպիսի աչքով է նայում: Բայց այն ժամանակ անհասկանալի յե, թե ինչո՞ւ նրանք վոչինչ չեն ձեռնարկում այս շարժումն իրենց ձեռնարկություններում ծավալելու համար: Սա մանավանդ տարորինակ է այն պատճառով, վոր այս ձեռնարկություններում արդֆինպլանների կատարումը շատ անբարենպաստ վիճակի մեջ է: Պետք է կարծել, վոր այս ձեռնարկություններից ներկայացուցիչներ կան հավաքում: Չի՞ կարելի արդյոք խնդրել նրանց ամբիոն բարձրանալ և մեզ բացատրել, թե բանն ինչումն է:

Մեզ մոտ Կիևում ու Կիևի մարզում ստախանովյան շարժման ծավալման լուրջ թերությունը պիտի համարել այն, վոր մենք դեռևս պատշաճ հակահարված չենք տվել ստա-

[1] «Լենինը և Ստալինը սոցիալիստական մրցության մասին», էջ 22, ռուսկուհրատ, 1932 թ.

խանովյան շարժման սաբոտաժավորներին ու խափանիչներին: Դուք գիտեք, որ թե՛ Դոնբասում, թե՛ մեր ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում ստախանովյան շարժումը հանդիպել է բավական ուժեղ դիմադրության: Ո՞վ է լինում սովորաբար ստախանովյան շարժմանը դիմադրողների բանակում, ո՞վ է հանդես գալիս իբրև ստախանովյան շարժման խափանիչ: Սովորաբար սրանք կամ ուղղակի թշնամիներ են, կամ ճահճացած բյուրոկրատական տարրեր, որոնց համար «ցավալի» է ու ծանր է հրաժարվել աշխատանքի «սովորական», իսկ ըստ էության հետամնաց, պրիմիտիվ մեթոդներից: Ստախանովյան շարժմանը դիմադրողների մեջ կան նաև բանվորների հետամնաց խավեր, որոնք դեռևս ամբողջությամբ չեն վերացրել իրենց հին վերաբերմունքը դեպի աշխատանքը, որոնք դեռևս շարունակում են իրենց աշխատանքի վրա նայել այս սկզբունքով՝ «պետությանը տալ ավելի պակաս, նրանից վերցնել ավելի շատ»:

Պայքարը ստախանովյան շարժման սաբոտաժավորների ու դիմադրողների դեմ, այս շարժման ճանապարհի արգելքները վերացնելու համար, ներկայումս հանդիսանում է դասակարգային պայքարի կարևորագույն նակատամասերից մեկը: Վորովհետև աշխատանքին հին, ոչ սոցիալիստական վերաբերմունք ցույց տալու դեմ պայքարելն ել, ինչպես բազմիցս նշում եր Լենինը, հանդիսանում է դասակարգային պայքարի տարատեսակներից մեկը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում:

Սակայն մեզ մոտ դեռևս պատշաճ պայքար գոյություն չունի ստախանովյան շարժմանը դիմադրողների ու թշնամիների դեմ: Մենք Կիևի ձեռնարկություններում նույնպես ունեցել ենք աշխատանքի ստախանովյան մեթոդներին դիմադրելու մի շարք փաստեր: Միքանի ձեռնարկություններում, հերթով ստախանովականներին «փրախուսելու» կարգով նույնիսկ սկսել են իջեցնել նրանց գնահատումները: Մենք այժմ պետք է առանձին ուշադրություն դարձնենք նման փաստերի վրա և խիստ վերաբերմունք ցույց տանք այն ամենաչնչին իսկ դիմադրությանը, որը ցույց է տրվում ստախանովյան շարժմանը, աշխատանքի ստախանովյան մեթոդներին: Հասկանալի է, որ այստեղ անհիմն, միանգամայն մոտեցում չի կարող լինել դեպի թշնամին և դեպի վորևե հետամնաց բանվոր: Առաջինին պետք է խիստ ջարդել, իսկ յերկրորդին հարկավոր է պարզաբանել, նրան պետք է դաստիարակել աշխատանքին սոցիալիստական վերաբերմունք ցույց տալու վոգով:

Իբրև ընդհանուր թերություն, որը բնորոշ է համարյա մեր բոլոր ձեռնարկությունների համար, անհրաժեշտ է նշել, որ ստախանովականների աշխատանքի մեթոդները չեն ուսումնասիրվում, չեն վերլուծվում: Վորևե ստախանովականի նկարագրում են լրագրում, փառաբանում են ժողովներում, զանազան կոնֆերանսներում, բայց վոչ ադմինիստրացիան, վոչ էլ ճարտարապետական-տեխնիկական կազմը լրջորեն խորամուխ չեն լինում այս ստախանովականի աշխատանքի մեթոդների մեջ, չեն ողնում նրան բացելու իր ռեկորդի «գաղտնիքը»: Մինչդեռ պարզ է, որ չի կարելի լրջորեն ու գործնապես խոսել աշխատանքի ստախանովյան մեթոդների լայն տարածման մասին, յեթե չենք ուսումնասիրում այս մեթոդներն ամեն մի տվյալ ցեխում, ամեն մի տվյալ աշխատավայրում:

Որինակի համար վերցնենք «Լենինսկայա Կուզնիցա» գործարանի կաթսաների ցեխի ստախանովական ընկ. Դեյնեգի փորձը: Նա հասել է իր նորմայի կատարմանը 300 տոկոսով: Թվում է թե, յեթե վոչ ամբողջ ձեռնարկության, ապա գեթ կաթսաների ցեխի ադմինիստրացիան, ճարտարապետական-տեխնիկական կազմը կհետաքրքրվեն

այս ռեկորդով, ի հայտ կբերեն և կուսումնասիրեն ընկ. Դեյնեգի աշխատանքի յեղանակներն ու մեթոդները: Բայց վոչ, վոչ մի նման բան տեղի չի ունեցել: Նրան նկարագրել են լրագրում, այսպես ասած տուրքը տվել են ստախանովյան ռեկորդին—և վերջ: Եվ ինչ զարմանալի բան կա նրանում, վոր ընկ. Դեյնեգի աշխատած կաթսաների ցեխում նա համարյա միակ ստախանովականն է:

Մեզ ալերգություն հարկավոր չե ստախանովյան շարժման հասցեին: Մեզ հարկավոր է բոլշևիկյան ղեկավարություն ցույց տալ նրան:

Իր ժամանակին Վլադիմիր Իլյիչը գրում եր.

«Որինակի ուժը, վոր չկարողացավ իրեն ցուցաբերել կապիտալիստական հասարակության մեջ, հսկայական նշանակություն կստանա այն հասարակության մեջ, վոր վերացրել է հողի ու գործարանների մասնավոր սեփականությունը...»:

«... Մեզ պետք է հենց այժմ հոդ տանել, վորպեսզի մեծ քանակությամբ արտասովոր այն թանկարժեք նյութը, վոր առկա յե առանձին քաղաքներում, առանձին ձեռնարկություններում, գյուղական առանձին համայնքներում իբրև արտադրության նոր կազմակերպության փորձ—վորպեսզի այս փորձը դառնա մասսաների սեփականություն»[1]:

Վլադիմիր Իլյիչն այսպես եր դնում առաջավոր արտադրական փորձի տարածման հարցն այն վաղեմի ժամանակներում: Առավելապես սա անհրաժեշտ է այնպիսի առաջավոր արտադրական փորձի վերաբերմամբ, վորպիսին ստախանովականների փորձն է:

Մենք պետք է մեր ձեռնարկությունների ադմինիստրացիայից և ճարտարապետական-տեխնիկական կազմից պա-

1 Լենին, XXII հ. հայ. եջ 537,

հանջենք խնամքով ուսումնասիրել աշխատանքի ստախանովյան մեթոդները, թափանցել այս մեթոդների էությունն մեջ, ընդհանրացնել այս առաջավոր փորձը, կազմակերպված տարածել այն բանվորների լայն մասսայի մեջ:

Ցեխ կուղեյի ձեր ուշադրությունը հրավիրել մի հիվանդագին յերևույթի վրա եվ, վոր տեղի ունի մեր միքանի ձեռնարկություններում ստախանովյան շարժման ծավալման առնչությամբ: Վերջին ժամանակներս մեզ մոտ տեղի յեն ունեցել մի շարք փաստեր, վորոնք վկայում են, վոր տեղ-տեղ սկսում են դուեհկացնել ստախանովյան շարժման էությունն ու լոզունգները:

Ընկեր Ստալինի խոսքերով ասած՝ գտնվում են առանձին բյուրոկրատ «ընկերներ», վորոնք դեմ չեն «իրենց ձեռքը վերցնելու» ստախանովյան շարժումը, ձեռնարկություններում ու ցեխերում «տարածել» ստախանովականների աճման կոնտրոլ թվերը, թխել ստախանովական մեթոդների տարածման որացուցային պլան և այլն: Հարկ չկա խոսելու այն մասին, վոր այսպիսի «ղեկավարությամբ» միայն խորտակել կարելի յե այս կենդանի գործը, կասեցնել այս իրոք մեծ շարժման ծավալումը:

Ցեխ առաջ արդեն ասացի, վոր ստախանովյան շարժումը սոցիալիստական մրցության ու հարվածայնության ամենաբարձր աստիճանն է, վոր ստախանովականները մեր եպոխայի ամենաառաջավոր մարդիկն են: Բայց ահա գտնվում են առանձին «ղեկավարներ», վորոնք դեմ չեն Ստախանովի անունով կնքելու այնպիսի յերևույթներ, վորոնք ընդհանուր վոչինչ չունեն ստախանովյան շարժման հետ: Որինակ կարել Մարքսի անվ. մեր հրուշակագործարանում, «հաշվվում են» 118 ստախանովական: Ցերբ մենք հետաքրքրվեցինք, թե ովքեր են մտնում այդ ցուցակի մեջ և ինչ արտադրական ցուցանիշներ ունեն այդ ընկերները, ապա պարզվեց, վոր 118-ի շարքերի մեջ ճնշող մեծամասնու-

թյամբ մտել են այն բանվորները, վորոնք արտադրանքի նորման դերակատարում են 10—15 տոկոսով:

Պարզ է, վոր այստեղ մենք գործ ունենք չարաբաստիկ և վաղուց հայտնի ավելի խոշոր թվերի հետևից ընկնելու հետ: Պարզ է, վոր այստեղ մենք գործ ունենք վոչ թե ստախանովյան շարժման ղեկավարների, այլ «ամենից ավելի բարձր ճչացողների» հետ: Պարզ է, վոր նման փաստերը միայն նվաստացնում ու դռեհկացնում են ստախանովյան շարժումը և վոր այսպիսի փաստերին պետք է ամենաանողոք կերպով և վճռականորեն հարվածել:

Ընկերներ, բոլշևիզմի վճռական կազմակերպական սկզբունքներից մեկը յեղել է այն, վոր մասսաների ամեն մի շարժում պահանջում է կազմակերպություն և ղեկավարություն: Այն փաստերից, վոր յես մեջ բերեցի Կիևի ու Կիևի մարզի ձեռնարկություններից, դուք կարող եք յեզրակացնել, վոր ստախանովյան շարժման ղեկավարման գործում մեզ մոտ դեռևս ամեն ինչ չէ, վոր կանոնավոր է:

Մեր կենտրոնական խնդիրն է այժմ այս առաջավորների սոցիալիստական նախաձեռնությունը դարձնել բանվորների ու կոլտնտեսականների ամենալայն մասսաների շարժում: Իսկ սա ամենից առաջ պահանջում է, վոր մենք ստախանովականների շարժումը դարձնենք տնտեսական, կուսակցական, կոմյերիտական և արհեստակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնը, ձեռնարկությունների, ՄՏԿ-ների, խորհրդատեսությունների, կոլտնտեսությունների ամբողջ կյանքի կենտրոնը: Մենք ստախանովականների համար պետք է ապահովենք այնպիսի պայմաններ, վորպեսզի նրանք իրոք կարողանան դլխավորել բանվորների ու կոլտնտեսականների ամենալայն մասսաների շարժումը՝ աշխատանքի իսկական սոցիալիստական արտադրողականության համար, աշխատանքի բարձր սոցիալիստական ցուցանիշների համար պայքարելիս:

Սրա համար մենք պետք է

ամեն կերպ ընդլայնենք այս շարժումը և տարածենք ստախանովականների աշխատանքի մեթոդները.

վերացնենք այս շարժման ճանապարհի բոլոր արդելքներն ու խոչընդոտները.

ամենօրյա հոգատարությամբ և ուշադրությամբ շրջապատենք այս առաջավորներին.

անդադրում աշխատենք ստախանովականների և բանվորների ու կոլտնտեսականների ամբողջ լայն մասսայի տեխնիկական դիտելիքների մակարդակի հետագա բարձրացման վրա.

յուրաքանչյուր ստախանովականի համար պայմաններ ապահովենք հետագա քաղաքական և կուլտուրական աճման նպատակով.

վճռական պայքար մղենք այս շարժումը դռեհկացնելու ամեն տեսակ փորձերի դեմ, այս շարժման բոլշևիկյան ղեկավարությունը ճարճատյունով, չաղակրատությամբ և անբովանդակ աղմկարարությամբ փոխարինելու փորձերի դեմ:

Սրանք են ստախանովյան շարժման ղեկավարման խնդիրները, վոր ներկայումս դրված են մեր առջև:

Այս առնչությամբ յես կուզեի կանգ առնել այն պահանջների վրա, վոր ձեռնարկությունների ղեկավարներն ու ճարտարապետական – տեխնիկական կազմը պետք է ներկայացնեն այժմ իրենք իրենց:

Փաստը մնում է փաստ: Մեր գլխավոր ինժեներները և մեր ճարտարապետական–տեխնիկական աշխատողները չեն, վոր առաջադրել են աշխատանքի և աշխատանքի կազմակերպման այն նոր մեթոդները, վոր տալիս են արտադրողականության 3—4 անգամ աճում, այլ Ստախանովը, Բուսիգինը, Վինոգրադովները, Կրիվոնոսը և ուրիշները:

Հասկանալի է, վոր յես մտադիր չեմ ստախանովականներին հակադրելու մեր ձեռնարկությունների ճարտարապետ-

տական – տեխնիկական կազմին: Բայց և այնպես, այն փաստը, որ վոչ թե ճարտարապետներն ու տեխնիկները, այլ իրենք առաջավոր բանվորներն են գտել աշխատանքի այս նոր յեղանակներն ու մեթոդները, այս փաստը մի բան վկայում է: Այն վկայում է, որ մեր ճարտարապետական – տեխնիկական կազմն անբավարար է աշխատում արտադրության ռացիոնալացման վրա, աշխատանքի բարելավված կազմակերպության նոր մեթոդներ վորոնելու վրա, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ուղիներ վորոնելու վրա:

Մեր դիրեկտորներն ու ճարտարապետական – տեխնիկական աշխատողներն այժմ իրենց համար յեզրակացություններ պետք է անեն ստախանովյան շարժումից, լավ մտածեն իրենց աշխատանքի մեթոդների մասին, վորպեսզի գտնվեն ստախանովականների հզոր շարժման դլուխ, վորն ընդդիրկում է մեր խորհրդային ժողովրդի ավելի ու ավելի լայն մասսաներին:

Դուք պետք է գլխավորեք ստախանովականների շարժումը, առաջ մղեք այս շարժումը, նրա հետ միասին շարժվեք ինքներդ, առաջ շարժեք մեր սոցիալիստական տնտեսության զարգացումը:

Մենք այսոր հավաքվել ենք նրա համար, վորպեսզի ձեզ հետ միասին պարզենք, թե ինչն է խանգարում ստախանովյան շարժման ծավալվելուն, ինչն է կանգնած նրա ճանապարհի առջև, ինչ է հարկավոր, վորպեսզի բազմապատկենք ստախանովականների վորձը Կիևի ու Կիևի մարզի բանվորների լայն մասսայի մեջ:

Ցեսս ինչպես հուսով եմ, նաև դուք, տարակույս չունենք, վոր Ֆաղկոմն ու Մարզկոմն այժմ ամուր կկպչեն այս գործին:

Իսկ ձեզնից՝ Կիևի ձեռնարկությունների առաջավոր ստախանովականներից այժմ պահանջվում է մի բան. չհանդըստանալ ձեռք բերվածով, չդոփել տեղում:

Առաջիկայումն էլ ավելի ու ավելի բարձրացրեք ձեր տեխնիկական դիտելիքների մակարդակը: Սա կկրկնապատկի ու կեռապատկի ձեր նվաճումները, է՛լ ավելի շատ կբարձրացնի ձեր առաջատար, կազմակերպական դերը բանվորների լայն մասսայի մեջ:

Անընդհատ կատարելագործեցեք ձեր աշխատանքի մեթոդներն ու յեղանակները, տարածեցեք դրանք բանվորների լայն մասսաների մեջ, պարզաբանեցեք, սովորեցրեք ուրիշներին, թե ինչպես աշխատել ստախանովարար:

Ավելի ամուր աշխատեցեք ձեր քաղաքական ու կուլտուրական մակարդակի բարձրացման վրա:

Ցեղեք խիստ առաջավորներ սոցիալիստական աշխատանքի ու սոցիալիստական կյանքի բոլոր բնագավառներում:

Ցեկեք առաջավորների ամուր, զոդված ընտանիքով բարձրացնենք այս շարժումն այնպես, ինչպես նրան բարձրացնում է ստախանովյան շարժման հայրենիք՝ արդյունաբերական պրոլետարական Դոնբասը: (Ամբողջ դահլիճը փոթորկալից ովացիա յե սարքում, բոլորը վոտքի յեն կանգնում):

ՀՀ Ազգային գրադարան
NL0205015

Գին 30 կ. ЦЕНА 30 К.

П. П. ПОСТЫШЕВ

СТАХАНОВЦЫ—НОВЫЕ ЛЮДИ ЕПОХИ СОЦИАЛИЗМА

Армпартиздат, Эривань